ՀԱՅԿԱԿԱՆ ՆԱԽԱԳԻԾ

ՏՈՏԱԼ ՌԱԶՄԱԿԱՆԱՑՈՒՄ

Խաղաղություն, թե անվտանգային երկընտրանք

ՀՈՒՆԻՍ / 2022

ՀԱՅԿԱԿԱՆ ՆԱԽԱԳԻԾ

«Հայկական ուսումնասիրություններ» շարք

Միլենա Մքոյան

ՏՈՏԱԼ ՌԱԶՄԱԿԱՆԱՑՈՒՄ

Խաղաղությո՞ւն, թե՞ անվտանգային երկընտրանք

armenianproject.com

hayaliq.com

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Համառոտագիր 4

Նախաբան 5

Ռազմականացումն աշխարհում 7

Համաշխարհային ռազմական ծախսերի միտումները 11

Ռազմականացումն ըստ առանձին երկրների 15

Եվրոպան ընդլայնում է ռազմականացման աշխարհագրական սահմանները 17

Ձինված հակամարտություններն աշխարհում 18

Նշաններ, որ հետսառըպատերազմյան միջուկային զինանոցների անկումն ավարտվում է 19

Ինչո՞ւ են երկրները գնում ռազմականացման 20

Իսկ ի՞նչ է անում Հայաստանը 23

Աղբյուրներ և գրականություն 25

Համառոտագիր

Միջազգային անվտանգության հորիզոնում 2021 թ.-ի վերջից գերակշռում են Ռուսաստանի և Ուկրաինայի, ինչպես նաև Չինաստանի և ԱՄՆ-ի միջև սրվող առճակատումները: Թողնելով մի կողմ ստեղծված ճգնաժամի պատճառների վերլուծությունը՝ արձանագրում ենք, որ ստեղծված իրավիճակը վերհանել է համաշխարհային ռազմականացման խնդիրը, որը մինչ այդ թվում էր սառըպատերազմյան անցյալում մնացած և ներկայումս ոչ արդիական գործոն: Մինչդեռ բազմաթիվ գլոբալ ու տարածաշրջանային միտումներ վկայում են համաշխարհային ռազմականացման խնդրի մասին՝ արձանագրելով, որ երկրները շարունակում են ապավինել զինմանը՝ մեծացնելով անվտանգային երկընտրանքը:
Ներկա ուսումնասիրությունն անդրադառնում է այդ միտումներին ավելի մանրամասնորեն՝ ընդգծելով հատկապես նրանք, որոնք ուղղակիորեն կամ միջնորդավորված կերպով կապված են հայկական օրակարգին՝ ի հաստատումն այն բանի, որ աշխարհը գնում է ռազմականացման, և ցանկացած միակողմանի խաղաղասիրական օրակարգ կեղծ է և լի աղետներով:
Կատարված ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ռազմական ծախսերի բոլոր քանակական ցուցանիշներն աճում են՝ արձանագրելով համաշխարհային և տարածաշրջանային ռազմականացում, ինչն ուղեկցվում է համապատասխան քաղաքական որոշումներով և հայտարարություններով: Սա բավարար հիմք է տալիս պնդելու, որ համաշխարհային ռազմականացումը ոչ միակողմանի, ուկրաինական վերջին ճգնաժամից դեռ ավելի վաղ սկսված գործընթաց է՝ պայմանավորված ռեալպոլիտիկով, այլ բառերով՝ պետությունների ազգային շահերով և նպատակներով: Իսկ Հայաստանի դե-ֆակտո իշխանությունների միակողմանի խաղաղասիրական քաղաքականությունը, որ ուղեկցվում է զինուժի կրճատմամբ և կազմաքանդմամբ, լի է միայն գոյաբանական աղետով, քանի որ մեր և մեզ մերձակա տարածաշրջաններում ակնհայտ է ռազմականացման միտումը, այդ թվում՝ հակահայկական ուղղվածությամբ:

Նախաբան

Միջազգային անվտանգության հորիզոնում 2021 թ.-ի վերջից գերակշռում են Ռուսաստանի և Ուկրաինայի, ինչպես նաև Չինաստանի և Միացյալ Նահանգների միջև սրվող առճակատումները: Սրան զուգահեռ միջազգային քաղաքագիտական շրջանակներում չի դադարում Ուկրաինայում սկսված ռազմական գործողությունների իրարամերժ պատճառների քննարկումը: Պատերազմի հետևանքները, անշուշտ, կլինեն լայնածավալ, այդ թվում՝ ծանր ազդեցություն գլոբալ պարենային անվտանգության վրա, քանի որ և՛ Ռուսաստանը, և՛ Ուկրաինան սննդի համաշխարհային հիմնական արտադրողներից են: Անվտանգության եվրոպական պայմանավորվածությունները և գլոբալ քաղաքական դասավորությունները դարձել են ավելի փոփոխական: Սրա վերջին դրսևորումներներից էր այն, որ Ուկրաինայում Ռուսաստանի գործողությունները դատապարտելու հարցում 2022 թ. մարտին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայում ներկայացված բանաձևին 35 պետություն ձեռնպահ քվեարկեց՝ վիճարկելով արևմուտքի կողմից առաջ քաշված պնդումները, թե ճգնաժամի հիմքում ընկած են բարոյական պատճառներ: Շատ վերլուծական շրջանակներ այս գործընթացի առանցքը համարում են ՆԱՏՕ-ի ընդլայնումը դեպի արևելք, որը ՌԴ-ն իր արտաքին քաղաքականության պաշտոնական փաստաթղթերում (ՌԴ արտաքին քաղաքականության հայեցակարգ 2016 թ., ՌԴ ազգային անվտանգության ռազմավարություն 2021 թ.) սահմանում է որպես անվտանգային սպառնալիք: Թեև արևմուտքը բացառեց մոտ հեռանկարում Ուկրաինայի անդամակցումը ՆԱՏՕ-ին, այնուամենայնիվ, չպետք է անտեսել արևմտյան մեկ այլ մեխանիզմ՝ ռազմական ենթակառուցվածքների ստեղծում Արևելյան Եվրոպայում: Թողնելով մի կողմ ճգնաժամի պատճառների վերլուծությունը՝ արձանագրում ենք, որ ստեղծված իրավիճակը վերհանեց համաշխարհային **ռազմականացման խնդիրը**, որը թվում էր սառըպատերազմյան աշխարհակարգին բնորոշ և ներկայումս ոչ արդիական, կամ, գոնե, որոշակիորեն հաղթահարված:

2010 թ.-ին ամբողջ աշխարհում փաստագրված պետական զինված հակամարտությունների թիվը ԽՍՀՄ փլուզումից հետո աստիճանաբար

նվազել է՝ հասնելով մոտ 30-ի: Այդ միտումն այժմ փոխվել է: Ըստ Ստոկհոլմի խաղաղության ուսումնասիրության միջազգային ինստիտուտի (SIPRI) տվյալների՝ 2010-ից 2020 թվականների ընթացքում հակամարտությունների թիվը գրեթե կրկնապատկվել է (մինչև 56)*: Մի շարք այլ միտումներ, ինչպիսիք են համաշխարհային ռազմականացման ինդեքսը, ծանր սպառազինությունների ինդեքսը, համաշխարհային ռազմական ծախսերի ինդեքսը, երկրների ռազմական բեռը, միջուկային սպառազինությունների համաշխարհային միտումները և այս բոլորում առանձին տարածաշրջանների միջև միտումների տարբերությունների մեծացումը վկայում են համաշխարհային ռազմականացման խնդրի մասին՝ արձանագրելով, որ աշխարհը թևակոխում է ռեալպոլիտիկի նոր շրջափուլ, որտեղ հիմնական գործոն է ռազմական ուժը, իսկ պետությունները շարունակում են ապավինել զինմանը՝ մեծացնելով անվտանգային երկընտրանքի նշանակությունը:

2010-ից 2020 թվականների ընթացքում աշխարհում հակամարտությունների թիվը գրեթե կրկնապատկվել է՝ հասնելով 56-ի (նախկին 30-ի փոխարեն):

Մեր այս վերլուծությունն անդրադառնում է այդ միտումներին ավելի մանրամասնորեն՝ ընդգծելով հատկապես նրանք, որոնք ուղղակիորեն կամ միջնորդավորված կերպով կապված են հայկական օրակարգին՝ ի հաստատումն այն բանի, որ աշխարհը գնում է ռազմականացման, և ցանկացած միակողմանի խաղաղասիրական օրակարգ կեղծ է և լի աղետներով:

** Տե՛ս SIPRI-ի “Environment of Peace. Security in a new era of risk” հետազոտությունը:*

Ռազմականացումն աշխարհում

Համաշխարհային ռազմականացման ինդեքսը (Global Militarisation Index, այսուհետ՝ GMI) ցույց է տալիս մեկ պետության ռազմական ապարատի հարաբերական կշիռն ու նշանակությունն ամբողջ հասարակության նկատմամբ: Այն գոյանում է մի քանի ցուցանիշների հիման վրա.

- ռազմական ծախսերի համեմատությունը համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) և առողջապահական ծախսերի հետ (ՀՆԱ-ի մասնաբաժինը),
- զինուժի ու զինվորական մասնագետների ընդհանուր թվի և ընդհանուր բնակչության թվի միջև համամասնությունը,
- ծանր սպառազինության առկա համակարգերի և բնակչության ընդհանուր թվի հարաբերակցությունը:

2021 թ.-ի դրությամբ ռազմականացման ընդհանուր միտումը հատկապես պարզ է դառնում, երբ դիտարկում ենք Եվրոպա աշխարհամասը: Այսպես՝ չնայած COVID-19 համաճարակի հետևանքով գլոբալ ՀՆԱ-ի նվազմանը՝ երկրներն ավելի շատ ռեսուրսներ են ծախսում բանակի վրա՝ իրենց տնտեսական արդյունքի համամասնությամբ:
2000-2020 թթ.-ներին գրանցվել է համաշխարհային միլիտարիզացիայի երկու միտում. մինչև 2018 թ.-ը նկատելի է ապառազմականացման կայուն միտում (նվազում)՝ պայմանավորված աշխարհի բնակչության և գլոբալ ֆինանսական ռեսուրսների աճով, ինչը հանգեցնում է ռազմական հատվածի մասնաբաժնի նվազմանը GMI-ում, իսկ 2018 թ.-ից ի վեր՝ վերառազմականացման միտում, ինչը պայմանավորված է 2019 թ.-ից սկսված COVID-19 համաճարակի և ուղեկցող համաշխարհային ՀՆԱ-ի անկման, այլ կերպ ասած՝ գոյատևման և ռեսուրսների համար պայքարի հետ:
Այս տարամիտումը կարելի է տեսնել նաև ենթաինդեքսներում.

- **Ծանր սպառազինությունների ինդեքսը** 2017 թ.-ից սկսած կրկին աճում է: Մինչ այդ նվազող միտումը կարելի է բացատրել մի կողմից

«դասական» միջպետական պատերազմների նվազմամբ, մյուս կողմից՝ ռազմական գնումների հնարավոր փոփոխությամբ։ Օրինակ՝ այս ինդեքսը դեռևս չի ներառում ռազմական արբանյակները կամ անօդաչու սարքերը և դրանց հեռահարությունը, արագությունն ու ճշգրտությունը՝ թեև դրանք ավելի ու ավելի կարևոր դերակատարում են ձեռք բերում ռազմադաշտում: Կարելի է պնդել, որ սրանց ներառումը կարող է նույնիսկ ավելի մեծացնել ռազմականացման աճող միտումը: Այսպիսով՝ դիտարկվող ռազմականացումը միանգամայն ակնհայտ է։

- Մեկ այլ կարևոր ցուցիչ՝ **ռազմական բեռը կամ երկրի ռազմական ծախսերը՝ որպես ՀՆԱ-ի մասնաբաժին**, երկրի վրա ռազմական հարաբերական տնտեսական բեռի ամենապարզ չափումն է: Համաշխարհային ռազմական բեռը 2021 թ.-ին կազմել է 2.2%՝ գրանցելով համաշխարհային ռազմական բեռի ամենամեծ տարեկան աճը 2009 թ.-ի ֆինանսատնտեսական ճգնաժամից հետո։
- **Համաշխարհային ռազմական ծախսերի ինդեքսը** ևս բացարձակ աճ է գրանցում (սրա մասին ավելի մանրամասն կանդարադառնանք հաջորդիվ)։

Այժմ անդրադառնանք **ըստ տարածաշրջանների ռազմականացմանը**, քանի որ դրանք ավանդաբար անտեսվում են ամբողջական պատկերում: Մասնավորապես՝ օրինակ Եվրոպան ամենառազմականացված տարածաշրջաններից է՝ Մերձավոր Արևելքից և Հարավարևելյան Ասիայից հետո: 2000-ականների առաջին տասնամյակում Եվրոպայում արձանագրված ապառազմականացման կայուն միտումը սկսեց հետընթաց ապրել ամենաուշը 2017 թ.-ից՝ գրանցելով հակառակ միտում:
Այս գործընթացը հիմնականում պայմանավորված է ռազմական ոլորտում ֆինանսական ռեսուրսների հարաբերական աճող բաշխմամբ: **2017 թ.-ից սկսած՝ ռազմական ծախսերի ինդեքսը ցույց է տալիս Եվրոպայում զգալի աճ:** Սա կապված է ինչպես 2019 թ.-ից սկսած՝ շատ երկրների տնտեսական ցուցանիշների անկման, այնպես էլ կանխամտածված քաղաքական

որոշումների հետ: Այդպիսի որոշումներից էր 2014 թ.-ին Ուելսի գագաթնաժողովում ՆԱՏՕ-ի ընդունած պաշտպանական ներդրումների խոստումը, այն է՝ պարտավորությունը հատկացնել իրենց ՀՆԱ-ի առնվազն 2% ռազմական ծախսերի վրա և ռազմական բյուջեի առնվազն 20% սպառազինությունների ձեռքբերման ու ռազմական հետազոտությունների և մշակումների վրա: Եվրոպայում ՆԱՏՕ-ի կողմից սահմանված այս երկու տոկոսի թիրախից զատ՝ ռազմականացման տանող կանխամտածված քաղաքական որոշումներից էր նաև Ռուսաստանի զինված ուժերի արդիականացումը (մոտ 2008 թ.-ից):

Ադրբեջանը գրանցում է բոլոր երկրներից ռազմականացման ամենաբարձր միտումը (54.5%):

Ռազմականացման ինդեքսն ամեն տարի հրապարակում է նաև ամենառազմականացված երկրների ցանկը: 2021 թ.-ին առաջին տասնյակը գերազանցապես մերձավորարևելյան երկրներն էին, ինչպես նաև Սինգապուրը, ՌԴ-ն, և, ինչը մեզ ավելի հետաքրքիր է, Ադրբեջանն ու Հայաստանը: Առաջին անգամ Ադրբեջանը (3-րդ տեղ) ընդգրկված է ամենառազմականացված երկրների տասնյակում՝ առաջ անցնելով Հայաստանից (5-րդ դիրք): **Ադրբեջանը գրանցում է բոլոր երկրներից ռազմականացման ամենաբարձր միտումը (54.5%):** Դա հիմնականում պայմանավորված է պատերազմական ծախսերի աճով: **Հայաստանը, 2021 թ.-ից սկսած, այս ցանկում զիջում է իր դիրքերը:** Սա **անտրամաբանական և հակաբնական է**՝ հաշվի առնելով, որ նույնիսկ եվրոպական մի շարք երկրներ, որոնք ընդհանրապես չունեն ամենօրյա անվտանգության խնդիր կամ չեն գտնվում հակամարտությունների հարաբերական ակտիվ փուլում, բարձրացնում են իրենց դիրքերը այս ցանկում: Օրինակ՝ **Չեռնոգորիա** համարվում է Եվրոպայի ամենառազմականացված 10 երկրներից մեկը, որը մեծացրել է իր ռազմական ծախսերը 2020 թ.-ի համեմատ, **Էստոնիան** ևս մեծացնում է ՀՆԱ-ում ռազմական ոլորտին հատկացվող ծախսի չափը՝ 2.3%, Գերմանիան, որի օրինակին կանդրադառնանք ստորև, ակնհայտորեն գնում է դեպի ռազմականացման:

Այլ երկրներ, օրինակ՝ ԱՄՆ-ը, ունեն ռազմական ծախսերի, անձնակազմի կամ ծանր սպառազինության շատ բարձր մակարդակ: Եթե հաշվի առնվեին

միայն այս բացարձակ թվերը, ապա Միացյալ Նահանգները մեծ տարբերությամբ առաջատար դիրքերում կլիներ՝ 778 միլիարդ ԱՄՆ դոլարի ռազմական ծախսերով (տվյալները՝ 2020 թ.-ի): Բացարձակ թվով ԱՄՆ-ը կհայտնվեր նաև առաջին տասնյակում՝ ռազմական անձնակազմով և ծանր սպառազինությամբ: Այնուամենայնիվ, քանի որ GMI-ն այս բացարձակ թվերը միշտ համադրում է ՀՆԱ-ի կամ բնակչության թվաքանակի հետ, Միացյալ Նահանգները 2021 թ.-ի ինդեքսում միայն 26-րդն է: Բայց **միտումը դարձյալ ռազմականացումն է**՝ հաշվի առնելով, որ նախորդ ցուցանիշում 30-րդն էր:

Թուրքիայի ռազմական ծախսերը ևս աճում են՝ հասնելով ՀՆԱ-ի 2.8%-ի:

GMI-ն հաշվի չի առնում նաև գլոբալ (ռազմական) հզորությունը, միջամտության կարողությունը կամ դա նախագծելու ունակությունը, այլապես Թուրքիան, օրինակ, կարող էր գրանցել ավելի բարձր ցուցանիշներ՝ հաշվի առնելով այդ երկրի ռազմական ներգրավվածությունը Սիրիայում, Լիբիայում, Իրաքում, Կիպրոսում, Արցախում: Ներկայումս **Թուրքիայի ռազմական ծախսերը ևս աճում են՝ հասնելով ՀՆԱ-ի 2.8%-ի**: Այսպիսով՝ ընդհանուր առմամբ **աշխարհում և մեզ հետաքրքրող տարածաշրջաններում ակնհայտ է ռազմականացման միտումը**:

Ռազմական ծախսերն ըստ տարածաշրջանների (հաստատուն ԱՄՆ դոլար) © SIPRI



Համաշխարհային ռազմական ծախսերի միտումները

Ըստ 2022 թ.-ի ապրիլին լույս տեսած Ստոկհոլմի Միջազգային խաղաղության հետազոտությունների ինստիտուտի նոր հրապարակման՝ գրանցվել է **համաշխարհային ռազմական ծախսերի աճող միտում**: Այսպես՝ 2021 թ.-ին համաշխարհային ռազմական ծախսերն առաջին անգամ գերազանցել են 2 տրիլիոն դոլարի նշագիծը՝ հասնելով 2 տրիլիոն 113 միլիարդ դոլարի՝ 0.7% ավելի, քան 2020 թ.-ին, և 12% ավելի, քան 2012 թ.-ին: Նույնիսկ համաճարակի առաջացրած տնտեսական հետևանքները չեն ազդել 2015 թ.-ից սկսած այս աճող միտման վրա:
Աշխարհում առաջատար 15 երկրների ռազմական ծախսը 2021 թ.-ին կազմում է համաշխարհային ռազմական ծախսերի 81%-ը, որից 38% բաժին է ընկնում ԱՄՆ-ին, իսկ 14%՝ Չինաստանին: Վերջիններիս հաջորդում են Հնդկաստանը, Մեծ Բրիտանիան և Ռուսաստանը՝ կազմելով առաջատար հնգյակը: Անդրադառնանք ըստ նշված երկրների ռազմական ծախսերի կառուցվածքին.

- ԱՄՆ-ը ծրագրում է **հիմնանորոգել և արդիականացնել** իր միջուկային զինանոցը՝ մեծացնելով այս ոլորտին ուղղված ծախսերի բաժինը իր ռազմական բյուջեում: Բացի այդ՝ մեծացնում է ներդրումները ռազմական հետազոտությունների և մշակումների ոլորտում՝ առաջնահերթություն տալով նոր տեխնոլոգիաների զարգացմանը հին համակարգերի վրա մեծածավալ ծախսերի փոխարեն: Սրանով էլ պայմանավորված է ԱՄՆ-ի՝ զենքերի գնմանը հատկացված ծախսերի բացասական միտումը:
- Չինաստանն իր ընթացիկ հնգամյա պլանում որպես ռազմական նպատակ սահմանում է **ռազմական և քաղաքացիական ոլորտների ներդաշնակեցման խորացումը**, այդ թվում գիտության և տեխնոլոգիաների համատեղ ասպարեզներում ինտեգրացիայի միջոցով:
- Հնդկաստանի համար առաջնահերթություն է իր զինված ուժերի արդիականացումը և **զինարտադրության հարցում ինքնաբավությունը**:

- 2021 թ.-ին բրիտանական կառավարության հրապարակած նոր քաղաքականությունը նպատակ ունի 4 տարվա ընթացքում **ավելացնել պաշտպանության նախարարության բյուջեն 33 միլիարդ դոլարով**, որի մեծ մասը կրկին հատկացվելու է սպառազինության արդիականացմանը և հետազոտություններին:
- 2021 թ.-ին Ռուսաստանի ռազմական ծախսերն աճել են երրորդ տարին անընդմեջ: **«Ազգային պաշտպանության» ծախսային տողը ևս ունի աճող միտում:** Այն կազմում է ռուսական ռազմական ընդհանուր ծախսերի ¾-ը, ներառում է օպերատիվ ծախսեր, ինչպես նաև սպառազինությունների գնումների ֆինանսավորում:

Անհրաժեշտ է արձանագրել նաև, որ այս տեսանկյունից աշխարհում առաջատար 15 երկրների շարքում զգալի փոփոխություններ են եղել: Այսպես՝ եվրոպական առաջատարներ Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան բարձրացել են երկուական հորիզոնականով՝ դառնալով 2021 թ.-ին համապատասխանաբար չորրորդ և վեցերորդ ամենամեծ ռազմական ծախս ունեցողները: Ընդ որում, Մեծ Բրիտանիան զբաղեցրել է Մերձավոր Արևելքում ավանդաբար ամենաշատ ռազմական ծախս ունեցող երկրի՝ Սաուդյան Արաբիայի տեղը: Մինչդեռ մեկ այլ մերձավորարևելյան երկիր՝ Իրանը, որի նկատմամբ շարունակաբար կիրառվում են արևմտյան պատժամիջոցներ, ավելացնելով իր ռազմական ծախսերը, առաջին անգամ հայտնվել է առաջատար 15-յակում: Այսպիսով, ավելի հետաքրքրական են դառնում հենց տարածաշրջանային միտումները, որոնք հաճախ մնում են ստվերում:
Դիտարկենք հատկապես այն տարածաշրջանների իրավիճակը, որոնք այս կամ այն կերպ առնչվում են Հայաստանին: **Մերձավոր Արևելքում** ռազմական ծախսերն 2021 թ.-ին նախորդ տարվա համեմատ նվազել են 3.3%-ով, սակայն առաձին երկրների դեպքում գրանցվել է աճ: Այսպես՝ Թուրքիայի համար առաջնահերթություն է շարունակում մնալ ռազմաարդյունաբերության մեջ ինքնաբավ դառնալը: Չնայած վերջին երկու տարում նկատվել է ռազմական ծախսերի անընդմեջ նվազում, ինչը կարող է պայմանավորված լինել ահագնացող գնաճով, այնուամենայնիվ, **2012-2021 թթ. տասնամյակում Թուրքիայի ռազմական ծախսերն աճել են 63%-ով՝**

դրական կոռելյացվելով տարածաշրջանում վերջինիս ընդլայնվող ռազմական ներգրավվածության հետ:

Մեկ շնչին բաժին ընկնող ռազմական ծախսերը Կենտրոնական և Արևելյան Եվրոպայում 2000-2021 թթ. (ԱՄՆ դոլար) © SIPRI 2021



Այսօր Եվրոպայում ռազմականացումը ցույց է տալիս, որ տարածված մտայնությունը, թե Եվրոպան՝ որպես միջազգային հանրության կորիզ, ձգտում է խաղաղության կամ «խաղաղության օրակարգի», սպառազինությունների կրճատման և ապառազմականացման, թյուրիմացություն է: **Եվրոպան ոչ միայն չի կրճատում իր սպառազինությունները, այլև գրանցում է կայուն աճ:** Ընդհանուր ռազմական ծախսերը Եվրոպայում 2021 թ.-ին կազմել են 418 միլիարդ դոլար՝ 3%-ով ավելի, քան 2020 թ.-ին, և 19%-ով ավելի, քան 2012 թ.-ին: ՆԱՏՕ-ի և ԵՄ-ի կորիզ Կենտրոնական և Արևմտյան Եվրոպայի ենթատարածաշրջանների համատեղ ռազմական ծախսերը 2021 թ.-ին աճել

են 3.1%-ով, ընդ որում՝ Արևմտյան Եվրոպայում ավելի բարձր տեմպերով (3.4%), քան Կենտրոնական Եվրոպայում (1.3%):

Եվրոպան ոչ միայն չի կրճատում իր սպառազինությունները, այլև գրանցում է կայուն աճ:

Բացի ռազմական ծախսերի քանակական աճից՝ քաղաքական հայտարարությունները ևս վկայում են Եվրոպայի ռազմականացման մասին: ԵՄ արտաքին հարաբերությունների և անվտանգության քաղաքականության հարցերով գլխավոր ներկայացուցիչ (ԱԳ ղեկավար) Ժոզեֆ Բորելը վերջերս հանդես եկավ ԵՄ-ում միացյալ զինված ուժեր ստեղծելու անհրաժեշտության մասին հայտարարությամբ՝ ասելով, որ Ուկրաինայում իրավիճակը ցույց տվեց միայն փափուկ ուժի բավարար չլինելը, ուստի ԵՄ-ն պետք է դառնա ռազմական ուժ[1]:

Գաղափարական առումով ուշադրության է արժանի նաև Ժ. Բորելի 2022 թ. մայիսի 24-ի ելույթը CEPS վերլուծական կենտրոնում, որտեղ խոսելով խաղաղության և պատերազմի մասին, Բորելը նշել է. «*Մենք (եվրոպացիները - Մ.Մ.) պատերազմը հոգեպես անհնար դարձրինք մեր մեջ: Խնդիրն այն է, որ այս (խաղաղության) խոսույթն այլևս շարժիչ ուժ չէ: Խաղաղություն, շատ լավ, հետո՞: Մենք երջանիկ ենք, և ի՞նչ: Այսպիսով երկու բան. առաջինը՝* ***մի՛ հավատացեք, որ խաղաղությունը բնական վիճակ է, իրերի բնական վիճակը պատերազմն է:*** *Մենք Եվրոպայում սովոր ենք հավատալ (ես հուսով եմ, որ դա այդպես չէ), որ խաղաղությունը նորմալ վիճակ է: Եվ երկրորդ՝ խաղաղությանը մեր ներսում: Այո՛, մենք հավատում ենք, բայց մենք ապրում ենք մի աշխարհում, որը խաղաղ չէ, այլ շատ վտանգավոր՝ մի բան, որ եվրոպացիները չեն ուզում հասկանալ՝ նմանվելով գլուխը ավազի մեջ մտցնող ջայլամի: Մեր խնդիրն է հասկացնել մարդկանց, որ աշխարհը, որում ապրում ենք, վտանգավոր է*»[2]:

ՆԱՏՕ-ն 2021 թ.-ի հունիսին ընդունած կոմյունիկեում որպես իր առաջնահերթություններից մեկն է սահմանել 2023 թ.-ից ՆԱՏՕ-ի անվտանգության ներդրումային ծրագրի և ռազմական բյուջեների մեծացումը: Սա ուժեղացնում է կոլեկտիվ պաշտպանության վրա 2014 թ.-ից հետո դրված շեշտադրումը մյուս երկու հիմնական խնդիրների՝

ճգնաժամային կառավարման և համագործակցության անվտանգության նկատմամբ:

Ընդհանրապես, պետք է գիտակցել, որ ՆԱՏՕ-ի և ԵՄ-ի՝ չնայած որոշակի հարցերում ունեցած տարբեր դիրքորոշումներին, ռազմավարական գործընթացների ընդհանուր համապատասխանեցումը հնարավորություն է տալիս նրանց ներդաշնակեցնելու պաշտպանական պլանավորման և կարողությունների զարգացման առաջնահերթությունները: **Չնայած ԵՄ-ն և ՆԱՏՕ-ն որոշակի հարցերում ունեն տարբեր դիրքորոշումներ, ռազմավարական գործընթացների համապատասխանեցումը կազմակերպությունների մակարդակում հնարավորություն է ստեղծում նաև մի հարթության վրա բերել դրանց ռազմական առաջնահերթությունները:** Կարելի է ասել, որ այս երկու արևմտյան կառույցները հիմքում ունեն նույն տրամաբանությունը և առաջնահերթությունները, հետևաբար հնարավոր չէ, օրինակ, ՆԱՏՕ-ի ռազմականացում և ԵՄ-ի ապառազմականացում:

> **Ժ. Բորել.**
> **«Մի՛ հավատացեք, որ խաղաղությունը բնական վիճակ է, իրերի բնական վիճակը պատերազմն է»:**

Ռազմականացումն ըստ առանձին երկրների

Ֆրանսիայի ռազմական ծախսերը 2021 թ.-ին նախորդ տարվա համեմատ ավելացել են 1.5%-ով: Այդ երկիրն իր ռազմական ոլորտի վրա ծախսել է ՀՆԱ-ի 1.9%-ին համարժեք գումար: Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնը 2022 թ.-ի մարտին հանդես է եկել հայտարարությամբ[3], որ ուկրաինական հակամարտությունն ամբողջ մայրցամաքում «*փոխել է դարաշրջանը*», հետևաբար՝ Ֆրանսիան և վերջինիս եվրոպացի գործընկերները պետք է ներդրումներ կատարեն ռուսական գազից հրաժարվելու և էներգիայի արտադրության մեջ ինքնաբավ լինելու, ինչպես նաև պաշտպանական խնդիրներն ու սննդամթերքի արտադրության հարցերը լուծելու համար: Հիշեցնենք, որ Է. Մակրոնը դեռևս 2017 թ.-ին նախագահի պաշտոնն

ստանձնելուց անմիջապես հետո պնդում էր, որ ԵՄ-ն պետք է ունենա իր միասնական պաշտպանական ուժերը[4]:

Մեկ շնչին բաժին ընկնող ռազմական ծախսերը հետխորհրդային երկրներում 2000-2021 թթ. (ԱՄՆ դոլար) © SIPRI 2021



Գերմանիան 2021 թ.-ին եղել է Արևմտյան և Կենտրոնական Եվրոպայում երրորդ ամենամեծ ծախս ունեցող երկիրը՝ իր ՀՆԱ-ի 1.3% ռազմական ծախսով: Ուկրաինական դեպքերի լույսի ներքո նաև Գերմանիայի կանցլեր Օլաֆ Շոլցն է օրերս հայտարարել, որ Գերմանիան պիտի ստեղծի ՆԱՏՕ-ի ամենամեծ բանակը Եվրոպայում և առաջատար նավատորմը Բալթիկ ծովում[5]: Խորհրդարանի ստորին պալատն իր հերթին հավանություն է տվել պաշտպանության համար հատուկ հիմնադրամի ստեղծմանը՝ 100 միլիարդ եվրո արժողությամբ[6]:

Իրենց ռազմական ծախսերն ավելացնելու պլանների մասին 2022 թ.-ի մարտի վերջին հայտարարել են նաև այլ երկրներ, որոնց թվում՝ Բելգիան, Դանիան, Լիտվան, Նիդեռլանդները, Նորվեգիան, Լեհաստանը և Ռումինիան։ Վերջիններս ձգտում են հասնելու կամ գերազանցելու ՆԱՏՕ-ի կողմից 2014 թ.-ին սահմանված ՀՆԱ-ի 2%-ի չափը։

Եվրոպան ընդլայնում է ռազմականացման աշխարհագրական սահմանները

Մի շարք եվրոպական երկրներ մեծացնում են իրենց անվտանգային հավակնությունները տարբեր տարածաշրջաններում՝ բուն Եվրոպայի սահմաններից մինչև Ասիախաղաղօվկիանոսյան տարածաշրջան։ Առաջին դեպքում խոսքը միայն ռազմական առումով առաջատար երկրների մասին չէ։ Օրինակ՝ Նորվեգիան և ՆԱՏՕ-ն պատրաստվում են համատեղ իրականացնել Սառը պատերազմի ավարտից ի վեր Նորվեգիայի գլխավորած ամենախոշոր զորավարժությունն Արկտիկայի շրջանում։ Նորվեգիայի դեպքում ռեկորդային է նաև զենքի ներկրման ցուցանիշը՝ **343%-անոց աճով 2017-2021 թթ. հնգամյակում**։ Նույնը կարող ենք տեսնել նաև եվրոպական այլ երկրների տարբեր ցուցանիշներում։ Օրինակ՝ Նիդեռլանդների դեպքում այդ ցուցանիշն աճել է 117%-ով։ Ինչ վերաբերում է ասիախաղաղօվկիանոսյան տարածաշրջանում գործունեությանը, այստեղ եվրոպական երկրները մեծացնում են իրենց ռազմականացման և՛ ռազմավարական, և՛ նյութական հիմքերը։ Այսպես՝ Ֆրանսիան այստեղ պահպանում է մշտական զորքեր և կանոնավոր կերպով տեղակայում է այլ ռազմածովային նավեր, Մեծ Բրիտանիան և ԱՄՆ-ը պատրաստվում են Ավստրալիային մատակարարել միջուկային էներգիայով աշխատող ութ սուզանավ՝ համաձայն 2021 թ.-ին կնքված եռակողմ համաձայնագրի։ **Այս և շատ այլ օրինակներ ապացուցում են, որ սեփական անվտանգության ամրապնդման միտումը նկատելի է ամբողջ Եվրոպայում և դրա սահմաններից դուրս։** Ըստ որում՝ եվրոպական այս միտման աշխարհագրությունը չի սահմանափակվում միայն ռազմականապես հզոր կամ Ռուսաստանին սահմանակից երկրներով։ Այնպես որ այդ երևույթի

միակ բացատրությունը չի կարող լինել այսպես ասած ռուսական ագրեսիային դիմակայելը կամ այլ հակառուսական մոտիվ:

Զինված հակամարտություններն աշխարհում

2021 թ.-ին ակտիվ զինված հակամարտություններ են տեղի ունեցել աշխարհի առնվազն 46 երկրում: Զինված հակամարտությունների հետ կապված մահացությունների ընդհանուր գնահատված թիվը 2021 թ.-ին աճել է 13%-ով՝ համեմատած նախորդ տարվա: Թեև հակամարտությունների հարուցած մահացությունները վերջին տարիներին նվազել են՝ մյուս կողմից իրենց սրությամբ աճել են դրանց այլ ազդեցությունները, ներառյալ՝ բնակչության տեղահանումը, պարենային անապահովությունը, մարդասիրական կարիքները և միջազգային մարդասիրական իրավունքի խախտումները:
Բացի ուկրաինական դեպքերից՝ Եվրոպայի հետխորհրդային հատվածում պահպանվել է լարվածությունը, չլուծված հակամարտություններ կան Արևմտյան Բալկաններում և Կիպրոսում: Ընդ որում՝ Կիպրոսի շուրջ լարվածությունը Թուրքիայի և Հունաստանի միջև շարունակ թեժանում է: Լուրջ անվտանգային մարտահրավերներ կան նաև հարավային Եվրոպայի հարևանությամբ և դրա սահմաններից դուրս՝ հատկապես արևելյան Միջերկրականում: Այստեղ Թուրքիան, Հունաստանը և Կիպրոսը տարաձայնություններ ունեն նաև բացառիկ տնտեսական գոտիների (exclusive economic zones) և միջերկրածովյան գազային հանքահորերի սեփականության վերաբերյալ: Միևնույն ժամանակ Իսրայելը, Եգիպտոսը, Հունաստանը և ԵՄ անդամ մյուս երկրները մտահոգված են, որ թուրքական ագրեսիան կարող է խաթարել ծրագրված խողովակաշարի կառուցումը՝ սպառնալով արտահանողների տնտեսական ներուժին և ներկրողների հասանելությանը գազին:

Նշաններ, որ հետսառըպատերազմյան միջուկային զինանոցների անկումն ավարտվում է

Միջուկային զենք ունեցող 9 պետությունները՝ Միացյալ Նահանգները, Ռուսաստանը, Միացյալ Թագավորությունը, Ֆրանսիան, Չինաստանը, Հնդկաստանը, Պակիստանը, Իսրայելը և Հյուսիսային Կորեան, շարունակում են արդիականացնել իրենց միջուկային զինանոցները: Ռուսաստանը և ԱՄՆ-ը միասին տիրապետում են միջուկային զենքի ավելի քան 90%-ին: Միջուկային զենք ունեցող մյուս 7 պետությունները կա՛մ մշակում են, կա՛մ տեղակայում զենքի նոր համակարգեր, կա՛մ հայտարարել են այդպիսի մտադրության մասին: Չինաստանը գտնվում է միջուկային զինանոցի զգալի ընդլայնման փուլում: Խոսքը մասնավորապես ավելի քան 300 նոր հրթիռային կայանների կառուցման մասին է:
Չնայած 2022 թ.-ի սկզբին 12705 մարտագլխիկների ընդհանուր գույքագրումից պարզվել է, որ մոտ 9440-ը գտնվում են ռազմական պահեստներում՝ հնարավոր օգտագործման համար՝ այնուամենայնիվ, դրանցից մոտ 3732-ը տեղակայվել են հրթիռներով և ինքնաթիռներով, իսկ մոտ 2000-ը (հիմնականում Ռուսաստանին և ԱՄՆ-ին պատկանող) պահվում են բարձր օպերատիվ զգոնության վիճակում:
Մեծ Բրիտանիան 2021 թ.-ին հայտարարել է մարտագլխիկների ընդհանուր պաշարների վերին շեմը բարձրացնելու որոշման մասին՝ ի հեճուկս տասնամյակների աստիճանական զինաթափման քաղաքականության: Քննադատելով Չինաստանին և Ռուսաստանին միջուկային թափանցիկության բացակայության համար՝ Միացյալ Թագավորությունը նաև հայտարարեց, որ այլևս չի հրապարակելու իր օպերատիվ միջուկային զենքի պաշարների, մարտագլխիկների կամ հրթիռների մասին տվյալները: 2021 թ.-ի սկզբին Ֆրանսիան պաշտոնապես մեկնարկել է երրորդ սերնդի միջուկային էներգիայով բալիստիկ հրթիռային սուզանավերի (SSBN) մշակման ծրագիրը: Հնդկաստանը և Պակիստանը, ըստ երևույթին, ընդլայնում են իրենց միջուկային զինանոցները, և երկու երկրներն էլ 2021 թ.-ին ներդրել են և շարունակում են զարգացնել նոր տեսակի միջուկային համակարգեր: Իսրայելը, որը հրապարակայնորեն չի ընդունում միջուկային

զենքի առկայությունը, նույնպես արդիականացնում է իր միջուկային զինանոցը:
Հյուսիսային Կորեան շարունակում է առաջնահերթություն տալ իր ռազմական միջուկային ծրագրին՝ որպես իր ազգային անվտանգության ռազմավարության կենտրոնական տարր: SIPRI-ի գնահատմամբ՝ այդ երկիրն այժմ հավաքել է մինչև 20 մարտագլխիկ և ունի բավականաչափ տրոհվող նյութ՝ ընդհանուր 45-55 մարտագլխիկների համար:
Այսպիսով՝ չնայած ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի միջուկային զենք ունեցող մշտական անդամները՝ Չինաստանը, Ֆրանսիան, Ռուսաստանը, Մեծ Բրիտանիան և ԱՄՆ-ը, 2022 թ.-ի հունվարին համատեղ հայտարարության մեջ վերահաստատել են, որ «*միջուկային պատերազմում հնարավոր չէ հաղթանակ տանել, և այն երբեք չպետք է տեղի ունենա*»[7], **բոլորն էլ շարունակում են ընդլայնել կամ արդիականացնել իրենց միջուկային զինանոցները**: Նկատելի է նաև ազգային ռազմավարություններում միջուկային գործոնի դերի մեծացման միտումը: Ռուսաստան-ԱՄՆ երկկողմ ռազմավարական կայունության բանակցությունները դադարեցվել են ուկրաինական դեպքերի պատճառով, իսկ միջուկային զենք ունեցող մյուս պետություններից ոչ մեկը չի վարում զենքի վերահսկման շուրջ բանակցություններ: Մեր անմիջական սահմանին գտնվող Իրանի հետ բանակցությունները դեռևս հանգուցալուծման չեն եկել, դեռ ավելին՝ դրա շուրջ հակասությունները ևս մեծանում են:
Այս միտումը SIPRI մասնագետները համարում են «շատ վտանգավոր»՝ ահազանգելով, որ «*Սառը պատերազմի ավարտից ի վեր գլոբալ միջուկային զինանոցների կրճատումներն ավարտվել են, և եթե միջուկային զենք ունեցող երկրները զինաթափման հարցում անհապաղ և կոնկրետ գործողություններ չձեռնարկեն, ապա միջուկային մարտագլխիկների գլոբալ պաշարները Սառը պատերազմից հետո առաջին անգամ շուտով կարող են աճել*»:

Ինչո՞ւ են երկրները գնում ռազմականացման

Այն, որ աշխարհում առաջատար երկրների մեծ մասը մեծապես ապավինում են ռազմական զսպման և ռազմական ուժի գործիքակազմերին՝ որպես

միջազգային հարաբերությունների բովանդակությունը կազմող հիմնական դետերմինանտ ընդունելով ուժը, ակնհայտ փաստ է: Այսպիսով՝ առաջին պլան է գալիս միջազգային հարաբերությունները բացատրող ռեալիզմի տեսությունը: Քննության առնենք նաև այս ամենի իրավափաստաթղթային հիմքերը.

- 2021 թ.-ի հունիսին ՆԱՏՕ-ի գագաթնաժողովում ընդունված «Ապագայի անդրատլանտյան օրակարգ» կոմյունիկեում ասվում էր, որ «*Ռուսաստանի ագրեսիվ գործողությունները սպառնալիք են եվրոատլանտյան անվտանգության համար*», և որ Չինաստանի «*աճող ազդեցությունն ու միջազգային քաղաքականությունը կարող են մարտահրավեր դառնալ*», որոնք պիտի լուծվեն դաշինքի կողմից: Դաշնակիցները շարունակում են մտահոգված լինել Սև ծովում, Միջերկրական ծովում և Սիրիայում Ռուսաստանի դիրքորոշմամբ և գործունեությամբ: Ըստ էության՝ հենց սրան է ուղղված ՆԱՏՕ-ի կողմից իր ռազմական քաղաքականության և ռազմական ենթակառուցվածքների ստեղծման ակտիվացումը, որի դրսևորումներից էր կազմակերպության գլխավոր քարտուղար Յանս Ստոլտենբերգի 2021 թ.-ի ելույթը Գերմանիայում, որտեղ վերջինս նշում է. «*Գերմանիան ինքը կարող է որոշել՝ լինի միջուկային զենք իր երկրում, թե ոչ, բայց այլընտրանքն այն է, որ մենք [ՆԱՏՕ-ն] հեշտությամբ կարող ենք տեղակայել միջուկային զենքը Եվրոպայի այլ երկրներում՝ այդ թվում Գերմանիայի արևելքում*»:[8] Մեկ այլ ապացույց է Մեծ Բրիտանիայի և Ուկրաինայի միջև կնքված երկկողմ հուշագիրը (Memorandum of Implementation)՝ ուղղված Ուկրաինայի ռազմածովային կարողությունների զարգացմանը: Դրանում, մասնավորապես, նախատեսվում է նոր ռազմածովային բազայի կառուցում Սև ծովում՝ որպես Ուկրաինայի հիմնական նավատորմի բազա և նոր ռազմաբազայի կառուցում Ազովի ծովում:[9] Առաջինը ՌԴ-ի կողմից դիտարկվում է որպես ազդեցության գոտի, իսկ երկրորդը՝ ներքին ծով: Ըստ էության՝ ՆԱՏՕ-ն հատում է ՌԴ-ի համար կարմիր գիծ՝ ՆԱՏՕ-ի ենթակառուցվածքների ընդլայնումը դեպի արևելք, որն

անում է իր իսկ շահերից ելնելով, ինչպես նշում է Ստոլտենբերգը՝ *«Մեր նպատակն է աշխարհը առանց միջուկային զենքի, բայց քանի որ ուրիշ երկրներ ունեն այն, ՆԱՏՕ-ն ևս պետք է ունենա»*, ընդ որում՝ *«ՆԱՏՕ-ի միջուկային փոխանակման համաձայնագիրը իրավական հիմքեր է ապահովում Եվրոպայի ոչ միջուկային անդամ երկրներում ԱՄՆ միջուկային զենքի տեղակայման համար՝ որպես դաշինքի միջուկային զսպման հայեցակարգի մաս»*[10]: Սրան կարելի է ավելացնել նաև մի շարք ավանդաբար չեզոք երկրների քաղաքական հայտարարությունները ՆԱՏՕ-ին միանալու ցանկության մասին, օրինակ՝ Ֆինլանդիա, Մոնտենեգրո և այլն:

- ՌԴ նախագահը 2021 թ.-ի հուլիսին հաստատել է վերանայված Ազգային անվտանգության ռազմավարությունը: Դրանում ԱՄՆ-ը միակ երկիրն է, որը համարվում է ռազմական մարտահրավեր ՌԴ-ի համար, մասնավորապես՝ ԱՄՆ-ի կողմից Եվրոպայում և ասիախաղաղօվկիանոսյան տարածաշրջանում միջին և փոքր հեռահարության հրթիռներ տեղակայելու հեռանկարը, որոնք դիտարկվում են «ռազմավարական կայունության և միջազգային անվտանգության սպառնալիք», ինչպես նաև, ԱՄՆ հակահրթիռային պաշտպանությունը և Ռուսաստանի սահմանների մոտ ՆԱՏՕ-ի ռազմական ենթակառուցվածքների «կառուցումը»:
  Ռազմավարության մեջ նշված ոչ ռազմական սպառնալիքների թվում է տեղեկատվական և արժեքային տիրույթում ՌԴ դեմ ուղղված գործունեությունը, որը նպատակ ունի խարխլել ավանդական բարքերն ու սովորույթները, արևմտականացնել ռուսական մշակույթը[11]: Ռուսաստանի դեմ ուղղված տեղեկատվական-հոգեբանական տարածքում ենթադրյալ գործունեությունը, որը նպատակ ունի խարխլել ավանդական սովորույթներն ու հավատալիքները և ներառում է ռուսական մշակույթի «արևմտականացումը»՝ մատնանշելով բնակչության անվտանգության վերաբերյալ մտահոգությունը:

Այս օրինակները ոչ ամբողջական, սակայն բավարար հիմք են տալիս պնդելու, որ համաշխարհային ռազմականացումը ոչ միակողմանի, ուկրաինական վերջին ճգնաժամից դեռ ավելի վաղ սկսված գործընթաց է՝ պայմանավորված ռեալպոլիտիկով, ասել է թե՝ պետությունների ազգային շահերով և նպատակներով: Կարող ենք եզրակացնել, որ գլոբալ մակարդակում մեծանում է պետությունների ռազմականացվածությունը, որում ավելի ու ավելի կարևոր է դառնում տարածաշրջանային միտումների տարբերությունը՝ ստեղծելով անվտանգային երկընտրանք. զինվել և զինել՝ հանուն սեփական անվտանգության պահպանման՝ մեծացնելով պատասխան գործողությունների հավանականությունը:

Իսկ ի՞նչ է անում Հայաստանը

«*Անվտանգության ապահովման ամենահուսալի միջոցը խաղաղությունն է*»,- պնդում է ՀՀ դե-ֆակտո վարչապետը: Իշխանական շրջանակները, այդ թվում՝ դե-ֆակտո ՊՆ ղեկավար Սուրեն Պապիկյանը, շարունակում են տարբեր ամբիոններից հնչեցնել, այսպես կոչված «պրոֆեսիոնալ բանակի» մասին, որը, ըստ էության, ենթադրում է բանակի փոքրացում (պարտադիր ժամկետային ծառայության վերացում) և կազմաքանդում: Դե-ֆակտո վարչապետը սա բառացի ձևակերպել է 2022 թ.-ի ամանորյա ուղերձում. «*Հայաստանը պիտի ունենա պրոֆեսիոնալ բանակ, ընդ որում, նաեւ կանանց ավելի ու ավելի շատ ներգրավմամբ: Ռազմավարական հեռանկարում ժամկետային զինծառայությունն էականորեն պիտի փոխվի, վերակերպվելով մարտական պատրաստականության պարտադիր հավաք-վարժանքների, որոնք կյանքի ընթացքում պիտի տեղի ունենան մի քանի անգամ, որոշակի պարբերականությամբ*»: Հաշվի առնելով այն համաշարը, որում ասվում են այս տեքստերը, այն է՝ Արցախյան երրորդ պատերազմում դե-ֆակտո իշխանությունների մեղքով հայկական կողմի պարտությունը, դրանից հետո Թուրքիայի և Ադրբեջանի՝ Հայաստանի ներքին գործերին միջամտությունը, այդ թվում՝ բանակը չվերակառուցելու մասին պարբերական

Զինվել և զինել՝ հանուն սեփական անվտանգության պահպանման…

հայտարարությունները, կարող ենք վստահաբար եզրակացնել, որ սրանով ՀՀ դե-ֆակտո իշխանությունները սպասարկում են թշնամական օրակարգը՝ ըստ էության, վերջիններիս հետ գնալով «վարչական իշխանություն՝ սուվերենության դիմաց» կոլաբորացիոնիստական գործարքի։
Վերջերս ՀՀ դե-ֆակտո վարչապետը Ազգային ժողովում հայտարարեց նաև, որ «*...միակ երաշխիքը, որ կարող է լինել պետության ու անվտանգության համար, համապարփակ խաղաղությունն է: ...Կկարողանանք, կստացվի՝ ոչ ոք չի կարող երաշխավորել, որովհետև խաղաղությունը միակողմանի շարժում չէ, այլ համագործակցության արդյունք: Մենք իլյուզիաներ չունենք և տեսնում ենք, որ մեզ ոչնչացնելու ցանկություն ունեցողների թիվը մեծ է, ավելի մեծ, քան կարելի է ենթադրել: Եվ խաղաղության օրակարգը մեզ ոչնչացնելու՝ աշխարհում գոյություն ունեցող ցանկությունները կառավարելու և չեզոքացնելու փորձ է*» [12]: Այս հայտարարությունը վկայում է այն մասին, որ իրականում խաղաղության օրակարգը ևս որևէ կերպ չի երաշխավորում, որ Հայաստանի և հայության դեմ կանգնած մարտահրավերները կարող են չեզոքացվել։ Ավելին, Թուրքիայի և Ադրբեջանի աճող ռազմականացումը հակառակի մասին է վկայում։ Ուստի այս պայմաններում ՀՀ զինված ուժերի վերականգնումը, համալրումն ու մեծացումը, այլ խոսքով՝ Հայաստանի ռազմականացումը այլընտրանք չունի։

ՀՀ զինված ուժերի վերականգնումը, համալրումն ու մեծացումը, այլ խոսքով՝ Հայաստանի ռազմականացումը այլընտրանք չունի:

Աղբյուրներ և գրականություն

[1] We need to increase European defence capabilities, working better together, 22.05.2022, https://www.eeas.europa.eu/eeas/we-need-increase-european-defence-capabilities-working-better-together_en (հղվել է 16.06.2022 թ.).
[2] A debate with Josep Borrell, 01.06.2022, https://www.youtube.com/watch?v=gqcP7y7rluQ&t=5m40s (հղվել է 16.06.2022 թ.).
[3] Europe must be more independent and shore up its defence, says Macron, 03.03.2022, https://www.theguardian.com/world/2022/mar/03/europe-must-become-more-independent-shore-up-defence-emmanuel-macron (հղվել է 16.06.2022 թ.).
[4] Merkel joins Macron in calling for a 'real, true European army', 13.11.2018, https://www.theguardian.com/world/2018/nov/13/merkel-joins-macron-in-calling-for-a-real-true-european-army (հղվել է 16.06.2022 թ.).
[5] Шольц пообещал Германии "самую большую армию в Европе" среди стран НАТО, 31.05.2022, https://ria.ru/20220531/armiya-1791936545.html (հղվել է 16.06.2022 թ.).
[6] Germany funds army update to face Russia threat https://www.france24.com/en/live-news/20220603-germany-funds-army-update-to-face-russia-threat (հղվել է 16.06.2022 թ.).
[7] Joint Statement of the Leaders of the Five Nuclear-Weapon States on Preventing Nuclear War and Avoiding Arms Races, 03.01.2022, https://www.whitehouse.gov/briefing-room/statements-releases/2022/01/03/p5-statement-on-preventing-nuclear-war-and-avoiding-arms-races/#:~:text=We%20affirm%20that%20a%20nuclear,deter%20aggression%2C%20and%20prevent%20war. (հղվել է 16.06.2022-ին).
[8] Speech by NATO Secretary General Jens Stoltenberg at the German Atlantic Association 'NATO Talk' Conference 2021, 19.11.2021, https://www.nato.int/cps/en/natohq/opinions_188772.htm (հղվել է 16.06.2022 թ.-ին).
[9] UK signs agreement to support enhancement of Ukrainian naval capabilities, 23.06.2021, https://www.gov.uk/government/news/uk-signs-agreement-to-support-enhancement-of-ukrainian-naval-capabilities , (հղվել է 16.06.2022 թ.-ին).
[10] Speech by NATO Secretary General Jens Stoltenberg…, նշվ. հղ..
[11] Указ Президента Российской Федерации от 02.07.2021 г. № 400, http://www.kremlin.ru/acts/bank/47046/page/1 (հղվել է 16.06.2022 թ.-ին).
[12] Վարչապետ Նիկոլ Փաշինյանի եզրափակիչ ելույթը Ազգային ժողովում ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվության քննարկմանը, 15.06.2022, https://www.primeminister.am/hy/statements-and-messages/item/2022/06/15/Nikol-Pashinyan-Speech/ (հղվել է 16.06.2022 թ.-ին).

***

Global Militarisation Index 2021, Bonn International center for Conflict Studies, Markus Bayer

Trends in World Military Expenditure, 2021, SIPRI
The Military Balance, The Annual Assessment of Global Military Capabilities and Defence Economics, 2022
SIPRI Yearbook: Armaments, Disarmament and International Security, 2022
Trends in International Arms Transfers, SIPRI 2021

armenianproject.com

hayaliq.com